

Եկեղեցական տոնացույց

Լուրեր

Սափրագլուխներին դատելու են

Նախորդ տարվա սեպտեմբեր ամսվա երեկոյան Վրոնսկի ժելեզնուգործնի շրջանում 25-ամյա հայ երիտասարդը տուն էր ծանապարհում 19-ամյա աղջկա: Նրանց մոտեցել էին չորս անչափահաս սափրագլուխներ և պահանջել տղայից չքվել հայրենիք՝ Հայաստան: Սակայն հայ երիտասարդը նշել է, որ Ռուսաստանի քաղաքացի է և չի պատրաստվում ոչ մի տեղ էլ մեկնել: Այդ ժամանակ ռուս անչափահասները, վանկարկելով «Ռուսաստանը ռուսների համար է», սկսել են ծեծել հայ պատանուն: Նրանցից մեկը դանակահարել է երիտասարդին կրծքի հատվածում: Սափրագլուխները դիմել են փախուստի, իսկ երիտասարդին տեղափոխել են հիվանդանոց:



Հարձակվողներին գտել էին և ձեռքակալել երեք օր անց: Հարուցվել է քրեական գործ՝ «Առողջությանը ծանր աստիճանի վնասվածքներ հասցնելու համար, որոնք իրականացվել էին ազգային ատելության դրդապատճառներով»:

Հայտնի է դարձել, որ վերջերս գործն ուղարկել են դատարան: Այժմ 20-ամյա երիտասարդը, ով դանակահարել էր հային, նստած է քննչական մեկուսարանում: Միջադեպի մյուս մասնակիցները իրավունք չունեն լքել երկրի սահմանները:

«Իմ հեռու, իմ մոտիկ, իմ սուրբ Հայաստան»

Համաշխարհային հայկական կոնգրեսն ու Ռուսաստանի հայերի միությունը անցկացնում են «Իմ հեռու, իմ մոտ, իմ սուրբ Հայաստան» թեմայով լավագույն գրական ստեղծագործության ամենամյա միջազգային մրցույթը, որին կարող են մասնակցել ազգությամբ հայ բոլոր աշակերտներն ու ուսանողները Հայաստանից, Արցախից և սփյուռքից: Մրցույթի համար հայտեր կընդունվեն փետրվարի 15-ից մինչև հունիսի 1-ը, իսկ արդյունքները կամփոփվեն հոկտեմբերին երևանում: Մրցույթի կազմակերպիչների նպատակն է Հայաստանի, Արցախի և սփյուռքի ուսանողներին ու աշակերտներին հարողակից դարձնել հայ ժողովրդի պատմական անցյալին, հավատ սերմանել նրա ապագայի հանդեպ:



ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱԶ ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻ ՕՐՅՆՈՒԹՅԱՆ ՕՐ

ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԳԱՆՈՒՄՏԸ ԵՐՈՒՄԱՂԵՍԻ ՏԱՃԱՐ

Տյառնընդառաջի մասին Ավետարաններում հիշատակություն կա միայն Ղուկասի մոտ. «Երբ նրանց սրբազործման օրերը լրացան, Մովսեսի օրենքի համաձայն՝ Նրան Երուսաղեմ տարան Տիրոջը ներկայացնելու համար, ինչպես գրված է Տիրոջ օրենքում. «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ համար սուրբ պիտի կոչվի»: Եվ Տիրոջ օրենքում ասվածի համաձայն՝ ընծա պետք է տալ մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ծագ» (Ղուկաս Բ 22-24):

Ըստ հրեական օրենքի արու զավակ ծնող յուրաքանչյուր մայր, անմաքուր համարվելով, պարտավոր էր ծննդաբերությունից քառասուն օր հետո տաճար գնալ և զոհ մատուցել (Ղևտ. ժԲ 1-8):

Անդրանիկ արուների համար գոյություն ուներ նաև հատուկ օրենք: Եգիպտացիների անդրանիկներին հասցրած պատուհասից հետո Աստված հրամայեց, որ հրեաների անդրանիկ արուները մկրտվեն Իրեն՝ (Ելից ԼԴ 19-20) Աստծո տաճարին ծառայելու: Իսկ երբ հրեաները անապատում, Մովսեսի բացակայության ժամանակ, ոսկե հորթ կանգնեցրին՝ իրենց առաջնորդելու համար, և երբ Ղևիի ցեղը Աստծո համաձայնությամբ գործակից եղավ Մովսեսին՝ հորթապաշտոնի օրենքները անհետացան (Ելից ԼԲ 26), Աստված այդ ցեղը ընտրեց Իր սպասավորները լինելու, իսկ մնացած բոլոր անդրանիկ արուներն ազատվեցին այդ պարտականությունից (Թմոց Գ 12): Բայց արու անդրանիկների վրա պարտականություն դրվեց իրենց համար փրկված վճարել ղևտացիներին՝ ըստ յուրաքանչյուրի կարողության:

ՍԻՄԵՆՆ ԾԵՐՈՒՆՈՒ ՄԱՐԳԱՐԵԱՑՈՒՄԸ ԵՎ ՕՐՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ղուկաս Ավետարանիչը խոսում է Սիմեոն անունով մի մարգարեի մասին, որ ապրում էր Երուսաղեմում և Սուրբ Հոգուց հրաման էր ստացել մահ չտեսնել՝ նախքան Տիրոջ Օծյալին տեսնելը: Երբ ծնողները մանուկ Հիսուսին օրենքի համաձայն բերեցին տաճար, Սիմեոնը, Ս. Հոգով առաջնորդված, Նրան գիրկն առավ և օրհնեց Աստծուն: Աստծո ընտրյալն է լուր բոլորի ավետեց, որ Ընծայվողը իրապես աշխարհի Փրկիչն է: Սիմեոնը օրհնեց նորածին Մանկանը և Նրա հետ խոսեց ոչ իբրև մանկան, այլ իբրև Աստծո, Ով իշխանություն ունի ամեն ինչի վրա. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակի՛ր Քո ծառայի՛ն ըստ Քո խոսքի, որովհետև աչքերս տեսան Փրկությունը Քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, Լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար և Փառք՝ Իսրայելի ժողովրդի համար» (Ղուկաս Բ 29-32):

ԱՆՆԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԱՑՈՒՄԸ

Տաճարում «կար մի մարգարեուհի՝ Աննա անունով, Փառուելի դուստրը, Ասերի ազգատոհմից», ով մկրտյալ այրիներից գլխավորն էր: Աննան 84-ամյա մի այրի էր: Նա ընդամենը 7 տարի էր ամուսնական կյանքով ապրել, այնուհետև թողել աշխարհիկ կյանքը և ապրում էր տաճարում, որտեղ ծոնապահությամբ ու աղոթքով գիշեր-ցերեկ ծառայում էր Աստծուն (Ղուկ. Բ 37): Նա նույնպես Ս. Հոգու առաջնորդությամբ այդ ժամին գալիս է տաճար և զոհություն մատուցում Տիրոջը, քանի որ նրա համար մեծ խնդրություն էր այդ մեծագույն շնորհը՝ տեսնել ծնված Մեսիային, այսինքն՝ Օծյալին:

ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԱԿԱՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ՝ ԵՎԵՂԵՑՈՒՆ ԸՆԾԱՅԵԼՈՒ ԿԱՐԸ

Ծննդից 40 օր հետո մանուկներին Տաճար տանելու և Աստծուն ընծայելու սովորությունը հաստատվեց նաև մեր եկեղեցուն: Երբ լրանում է երեխայի ծննդյան քառասունները օրը, ծնողները նրան բերում են եկեղեցի, ուր հոգևորականը, մեր եկեղեցու ծխակարգի համաձայն, կատարում է երեխայի քառասնօրյա կարգը, որը մի բարեպաշտական արարողություն է: Ծիսակատար քահանան արարողության ժամանակ Աստծուց խնդրում է, որ Նրա Ամենատես Աչքը և Ամենագոր Աջը միշտ հովանի լինեն մանկանը: Ընծայման կարգն ավարտվում է «Պահպանիչ» և «Հայր մեր» աղոթքներով:

ՏՈՒՆԻ ԿՐՈՒՆ-ԾԻՍԱԿԱՆ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Այս տոնն իր կրոնա-ծիսական արարողակարգում ունի 3 տարբեր գունավորումներ՝ հրեական, պարսկական և քրիստոնեական: Հրեական, որովհետև մովսիսական օրինապահության արտահայտություններից է, որը դրսևորվում է քառասուն օրական երեխային տաճարին ընծայելու պատվիրանով: Հեթանոսականն այն է, որ տոնի նախորդ երեկոյան՝ նախատոնական, խարույկ են վառում, ինչը հեթանոսական սովորույթ է: Իսկ քրիստոնեական է Քրիստոսի Գալստյան տոնի կատարումը՝ ի պատիվ մեր Փրկչին տաճարին ընծայելու իրադարձության, որն օրինակ է քրիստոնյային՝ հոգևոր կյանքին մկրտվելու, քանի որ մենք այսօր էլ առավել կարիք ունենք մեր մեղսակից վիճակից բարձրանալու և Տիրոջը ընդառաջ քայլելու՝ Նրան տեսնելու և Նրա հետ խոսելու, քանզի «Նա է լույսն աշխարհի, և ով գնա Նրա հետևից, խավարի մեջ չի քայլի, այլ կընդունի կենաց լույսը» (Յովհ. Ը 12):

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱԶ ՏՈՒՆԻ ԾԻՍԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ ՄԵՐ ԵՎԵՂԵՑՈՒՄ

Տյառնընդառաջի ծիսական արարողակարգը սկսվում է

փետրվարի 13-ին, երեկոյան ժամերգության ավարտին, երբ սկսվում է նախատոնակը: Նախատոնակին նախ կատարվում է Անդաստանի կարգը, որով օրհնվում են աշխարհի բոլոր չորս կողմերը: Այնուհետև հանդիսադիր հոգևորականի կողմից օրհնված մոմով վառվում են ատյանում սեղանին դրված մոմերը: Այդ օրն ամբողջ եկեղեցուն արտասովոր լուսավորություն է լինում:

Տյառնընդառաջի երեկոյան կատարվող Անդաստանի կարգը ձմռան ավարտի և գարնան բացվելու առաջին մունետիկն է, ինչը մարդկանց սրտերը կարծես վերստին վերանորոգության է հրավիրում բնության հետ՝ ապաշխարության և հոգու մեղսածին թնրությունից արթնանալու:

Եկեղեցու բակում վառվում է խարույկ, որի շուրջ խմբվում է հավատացյալ ժողովուրդը, իսկ հոգևոր դասը կատարում է Անդաստանի կարգը:

Չափերն ու խարույկները ունեն հետևյալ պատճառները: Նախ, որ հեթանոսներն Աստծո պատիվը կրակին էին մատուցում, իսկ մենք կրակը ցույց ենք տալիս որպես Քրիստոսի ծառայողի համար էլ այն բերում ենք Աստծուն ծառայեցնելու: Եվ ինչպես երբայցի մանուկները ձառի ոստերը Քրիստոսին ընծայեցին, այնպես և մենք կրակն ենք ընծայում: Իսկ վրայից թռչելով՝ ոտնատակ ենք տալիս այն, դրանով շեշտելով, որ կրակը չէ Աստված, այլ Նա, Ով քառասուն օրական ժամանակ եկավ տաճար:

Ժամերգության ավարտին հավատացյալներն եկեղեցու ատյանում օրհնված մոմից վառում են իրենց ձեռքի մոմը, և այդ լույսը, որպես Քրիստոսի բերած փրկության խորհրդանիշ, տանում լուսավորելու իրենց տները: Այս ամենը, իրար հետ մեկ ամբողջություն կազմելով, կարծես լույսի տոնախմբություն է, ինչը Սիմեոնի՝ Քրիստոսին տված «Լույս» անվանման խորհուրդն ունի: Չուտ ժողովրդական սովորույթ է փետրվարի 13-ին, երեկոյան ժամերգությունից հետո, Տյառնընդառաջի խարույկ վառելը: Այն ծիսական որևէ իմաստ և նշանակություն չունի: Այդ սովորույթը վերաբերում է նրանց, ովքեր տանը նորապասկներ ունեն:

Ժամանակին գոյություն են ունեցել Տյառնընդառաջի տոնի հետ կապված ազգային սովորույթներ և ավանդություններ, որոնք այժմ գրեթե մոռացության են մատնվել՝ պահելով միայն կրակի վրայից ցատկերը: Իսկ փետրվարի 14-ի առավոտյան կատարվում է Տյառնընդառաջի պատարագը:

ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻ ՕՐՅՆՈՒԹՅԱՆ ՕՐ

Վերջին շրջանում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գաբրիել Բ-ի բարձր տնօրինությամբ գեղեցիկ սովորույթ է դարձել Տյառնըն-

ԼՈՒՅՍԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Առանց լույսի խորհրդի անկարելի է ըմբռնել ու բացատրել քրիստոնեությունը: «Ես եմ աշխարհի լույսը, ով էմ հետևից գա, չի մնա խավարի մեջ» (Յովհ. Բ 12):

Այս լույսը, որը հենց Ինքը Փրկիչն է, միայն Նա կարող է տալ մարդկությանը՝ փարատելու համար մարդկանց հոգիների խավարը:

Սիրելի՛ հայրդիք, մեր երանաշնորհ նախնիները, մեր պատվական հայրերը Աշխարհի Լույսն ընդունողների մեջ առաջիններից եղան: 1700 տարի առաջ ս. Գրիգորը, լուսավորվելով աստվածային այդ լույսով, առաջին Լուսավորիչը դարձավ իր ժողովրդի: Այդ լույսը միշտ առաջնորդեց և այսօր նույնպես պիտի առաջնորդի մեր քայլերը 1700-ամյա քրիստոսակերտ մեր կյանքում:

Արդ, եկեք մաքրենք մեզ արտավոր գործերից, որոնք պատնեշում են Տիրոջ փրկարար և կենսագործ ճառագայթների ներթափանցումը մեր հոգիներից ներս: Մաքրե՛նք մեր հոգու պատուհանները մեղքի աղտից, որպեսզի Հիսուսի լույսն անարգել կարողանա հրաշագործել մեր կյանքում:

Տյառնընդառաջը թող առիթ լինի այդ լույսը նորոգելու և անշեջ պահելու՝ իմաստուն կույսերի պես գիշեր ու ցերեկ հսկելով այն: Եվ փորձենք մեր գործերով, մեր բարի ցանկություններով ամեն ար պահել, որպեսզի ապագայի վառ հույսերով բոցավառ հանձնենք հաջորդների՝ մեր զավակներին: Թող հավատքի փրկարար լույսը հավետ շողա մեր ազգի սրտում և մեր եկեղեցու նվիրական խորաններին:

Քայլենք Տիրոջն ընդառաջ, քանզի Տերն է աշխարհի Լույսը:

Օրհնությամբ և աղոթքով՝ Տեր Անանիա քին Բաբայան